«Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի մարտի 27-ի թիվ 332-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծ

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

2022թ. _____ ____-ի N_____-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 27-Ի N 332-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների համաձայն՝

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի մարտ 27-ի «Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանությունում մատնադրոշմային քարտադարանի կազմակերպման և գործունեության կարգը հաստատելու մասին» N 332-Ն որոշման մեջ (այսուհետև՝ որոշում) և հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) որոշման նախաբանը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

««Ոստիկանության մասին» օրենքի 20-րդ հոդվածի 1-ին մասի 6.1-ին կետի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.»,

2) որոշման և որոշմամբ հաստատված հավելվածի վերնագրերից և ողջ տեքստից հանել «Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր» բառերը,

3) հավելվածի 1-ին կետից հանել «կասկածյալներից,» բառը,

4) հավելվածի 7-րդ կետի 3-րդ ենթակետից և 12-րդ կետից հանել «կասկածվող կամ» բառերը,

5) հավելվածի 18-րդ կետի 1-ին ենթակետում «վաղեմության ժամկետն անցնելու հիմքով քրեական գործի կարճման կամ հարուցումը մերժելու» բառերը փոխարինել «քրեական վարույթի կարճման» բառերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Հայաստանի Հանրապետության

վարչապետ **Ն. Փաշինյան**

ք. Երևան « »____2022թ.